

# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն



## Հարգելի դիմորդներ

Գավառի պետական համալսարանը հայտարարում է 2017/2018 ուստարվա բակալավրիատի առկա ուսուցման ընդունելություն:

Դիմորդների գործերը ընդունվում են ս/թ մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ը՝ ժամը 18<sup>00</sup>:

Դիմորդները դիմում-հայտի հետ ներկայացնում են՝

1. լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ),
2. 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի),
3. փաստաթուղթ զինվորական ծառայության առնչության մասին
4. անձը հաստատող փաստաթուղթ
5. ՀՀ պետական բուհերում սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր,
6. միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմները /առկայության դեպքում/,
7. փաստաթղթերն ընդունելու և ձևակերպելու համար 1500-ական դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը:

Փաստաթղթերի ընդունման ժամկետը լրանալուց հետո դիմորդների կողմից լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելն արգելվում է:

Քննություններին և մրցույթին մասնակցելու դիմում-հայտը փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտից հետո փոփոխման ենթակա չէ:

Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1,  
ԳՊՀ գլխավոր մասնաշենք, 2-րդ հարկ, 218 սենյակ:  
Հեռախոս՝ 060-46-03-02, 060-46-12-43  
ԳՊՀ Ընդունող հանձնաժողով